

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ (ՀԵՄԱ)

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ Ընդունող պետություն՝

մի կողմից, և

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ ԵՄ՝

մյուս կողմից,

այսուհետ միասին՝ Կողմեր,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ՝

- Եվրոպական միության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցչին ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2022 թվականի դեկտեմբերի 27-ի գրությունը,
- Խորհրդի 2023 թվականի հունվարի 23-ի 2023/162 (ԱԱԸՔ) որոշումը Հայաստանում Եվրոպական միության առաքելության մասին (ՀԵՄԱ)¹,
- որ սույն Համաձայնագիրն ազդեցություն չի ունենա միջազգային դատարաններ և տրիբունալներ հիմնելու մասին միջազգային համաձայնագրերով և այլ փաստաթղթերով նախատեսված՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

¹ OJ EU L 22, 24.1.2023, էջ 29

Հոդված 1

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) և նրա անձնակազմի վրա:

2. Սույն Համաձայնագիրը գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Սույն Համաձայնագրի նպատակներով՝

a) «ՀԵՄԱ» կամ «Առաքելություն» նշանակում է՝ Հայաստանում ԵՄ առաքելություն (ՀԵՄԱ), որն ստեղծվել է Եվրոպական միության խորհրդի 2023/162 (ԱԱԸՔ) որոշմամբ, այդ թվում՝ դրա բաղադրատարրերը, ստորաբաժանումները, գլխամասային գրասենյակները և անձնակազմը, որոնք տեղակայված են Ընդունող պետության տարածքում և կցված են ՀԵՄԱ-ին:

Մաքսային և հարկային հարցերում ՀԵՄԱ-ն Ընդունող պետության կողմից դիտարկվելու է որպես դիվանագիտական ներկայացուցչություն.

b) «Առաքելության ղեկավար» նշանակում է՝ ՀԵՄԱ-ի առաքելության ղեկավար, որը նշանակվել է Եվրոպական միության խորհրդի կողմից.

c) «Եվրոպական միություն (ԵՄ)» նշանակում է՝ ԵՄ մշտական մարմիններ և դրանց անձնակազմ.

d) «ՀԵՄԱ-ի անձնակազմ» նշանակում է՝ Առաքելության ղեկավար, ԵՄ անդամ պետությունների կողմից գործուղված Առաքելության անձնակազմ, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայություն (ԵԱԳԾ) և ԵՄ կառույցներ, ինչպես նաև ԵՄ անդամ չհանդիսացող պետություններ, որոնք հրավիրվել են ԵՄ կողմից՝ մասնակցություն ունենալու ՀԵՄԱ-ի գործունեությանը, ՀԵՄԱ-ի կողմից պայմանագրային հիմունքներով հավաքագրվող միջազգային անձնակազմ, որը տեղակայվում է Առաքելության նախապատրաստման, օժանդակման և իրականացման նպատակով, և Առաքելության շրջանակներում

Ուղարկող պետության, ԵՄ կառույցի կամ ԵԱԳԾ-ի համար առաքելություն իրականացնող անձնակազմ: Այն չի ներառում տեղում աշխատանքի ընդունված՝ առևտրային հարցերով ներգրավված կատարողներին կամ անձնակազմին:

e) «Գլխամասային գրասենյակ» նշանակում է՝ Հայաստանի Հանրապետությունում ՀԵՄԱ-ի գլխամասային գրասենյակ:

f) «Ուղարկող պետություն» նշանակում է՝ ԵՄ անդամ պետություն կամ ԵՄ անդամ չհանդիսացող պետություն, որն Առաքելության կազմում անձնակազմ է գործուղել:

g) «Օբյեկտներ» նշանակում է՝ բոլոր շենքերը, շինությունները, կայանքները և հողատարածքները, որոնք անհրաժեշտ են Առաքելության գործունեության իրականացման, ինչպես նաև Առաքելության անձնակազմի կացարանի համար:

h) «Տեղում աշխատանքի ընդունված անձնակազմ» նշանակում է՝ անձնակազմ, որն Ընդունող պետության քաղաքացի է կամ մշտապես բնակվում է այնտեղ:

i) «Պաշտոնական նամակագրություն» նշանակում է՝ ՀԵՄԱ-ին և նրա գործառույթներին վերաբերող ամբողջ նամակագրություն:

j) «Կատարող» նշանակում է՝ այնպիսի անձ, որը, Առաքելության գործունեության հետ կապված, ՀԵՄԱ-ին մատակարարում է ապրանքներ կամ մատուցում է ծառայություններ:

k) «ՀԵՄԱ-ի տրանսպորտային միջոցներ» նշանակում է՝ բոլոր փոխադրամիջոցները և այլ տրանսպորտային միջոցները, որոնք ՀԵՄԱ-ի սեփականությունն են, պատկանում են նրան վարձակալության կամ չարտերային հիմունքներով:

l) «ՀԵՄԱ-ի գույք» նշանակում է՝ սարքավորումներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներ և սպառողական ապրանքներ, որոնք անհրաժեշտ են ՀԵՄԱ-ին:

Հոդված 2

Ընդհանուր դրույթներ

1. ՀԵՄԱ-ն և ՀԵՄԱ-ի անձնակազմը պահպանում են Ընդունող պետության օրենքներն ու կարգավորումները և ձեռնպահ են մնում ՀԵՄԱ-ի նպատակներին չհամապատասխանող որևէ գործողությունից կամ գործունեությունից:

2. ՀԵՄԱ-ն սույն Համաձայնագրով նախատեսված իր գործառույթների իրականացման ընթացքում գործում է անկախ: Ընդունող պետությունը հարգում է ՀԵՄԱ-ի միատարրությունը և միջազգային բնույթը:

3. Առաքելության ղեկավարն Ընդունող պետության կառավարությանը պարբերաբար տեղեկացնում է Ընդունող պետության տարածքում տեղակայված ՀԵՄԱ-ի անձնակազմի թվի մասին:

Հոդված 3

Նույնականացումը

1. ՀԵՄԱ-ի անձնակազմին տրամադրվում է, և անձնակազմը նույնականացվում է Առաքելության նույնականացման քարտով, որը միշտ պետք է լինի նրա մոտ: Ընդունող պետության համապատասխան մարմիններին տրամադրվում է Առաքելության նույնականացման քարտի նմուշը:

2. Առաքելության տրանսպորտային միջոցները նույնականացման նպատակով կարող են ունենալ ՀԵՄԱ-ի տարբերիչ նշաններ և (կամ) գրանցման համարանիշներ, որոնց նմուշը կտրամադրվի Ընդունող պետության համապատասխան մարմիններին:

3. ՀԵՄԱ-ն իրավասու է ԵՄ դրոշմ տեղադրել իր Գլխամասային գրասենյակում և այլուր՝ առանձին կամ Ընդունող պետության դրոշի հետ միասին՝

Առաքելության ղեկավարի որոշմամբ: ՀԵՄԱ-ի կազմ ներառված ազգային հավաքակազմի պետական դրոշները կամ տարբերանշանները կարող են տեղադրվել Առաքելության օբյեկտների, փոխադրամիջոցների և ցանկացած այլ տրանսպորտային միջոցի և համազգեստի վրա Առաքելության ղեկավարի որոշմամբ:

Հոդված 4

Ընդունող պետության տարածքում սահմանի հատումը և տեղաշարժը

1. ՀԵՄԱ-ի անձնակազմը և գույքը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, հատում են Ընդունող պետության սահմանը պետական սահմանային անցակետերով և միջազգային օդային միջանցքներով:

2. Ընդունող պետությունը դյուրացնում է ՀԵՄԱ-ի անձնակազմի և ՀԵՄԱ-ի գույքի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների մուտքը և ելքը Ընդունող պետության տարածք: ՀԵՄԱ-ի անձնակազմը Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատում է վավեր անձնագրերով: Ընդունող պետության տարածք մուտք գործելիս և այնտեղից մեկնելիս ՀԵՄԱ-ի անձնակազմը, որն ունի Առաքելության նույնականացման քարտ կամ ՀԵՄԱ-ին մասնակցության ժամանակավոր ապացույց, Ընդունող պետության տարածքում ազատվում է մաքսային հսկողությունից և ընթացակարգերից, մուտքի վիզայի ու միգրացիոն պահանջներից և միգրացիոն հսկողության ցանկացած ձևից:

3. ՀԵՄԱ-ի անձնակազմն ազատվում է Ընդունող պետության՝ գրանցմանը և օտարերկրացիների վերահսկողությանը վերաբերող կարգավորումներից, սակայն ձեռք չի բերում Ընդունող պետության տարածքում մշտական բնակության իրավունք կամ կացության կարգավիճակ:

4. ՀԵՄԱ-ի գույքը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, Ընդունող պետության տարածք դրանց մուտքը, տարանցումը և ելքը, հաջակցություն ՀԵՄԱ-ի, ազատվում են հայտարարագրումից կամ այլ մաքսային փաստաթղթեր

ներկայացնելու պահանջից և ցանկացած ստուգումից՝ Ընդունող պետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան:

5. Փոխադրամիջոցները և մյուս տրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվում են ՀԵՄԱ-ին աջակցելու համար, ենթակա չեն տեղում կիրառվող լիցենզավորման կամ գրանցման պահանջներին: Շարունակում են գործել համապատասխան միջազգային չափանիշներն ու կանոնակարգերը:

Անհրաժեշտության դեպքում ձեռք են բերվում 18-րդ հոդվածում նշված լրացուցիչ պայմանավորվածությունները:

6. ՀԵՄԱ-ի անձնակազմը կարող է Ընդունող պետության տարածքում վարել փոխադրամիջոցներ և շահագործել օդանավ և ցանկացած այլ տրանսպորտային միջոց՝ պայմանով, որ ունենա վավեր ազգային կամ միջազգային վարորդական վկայականներ կամ օդաչուի վկայական՝ ըստ իրավիճակի: Ընդունող պետությունը, առանց հարկերի կամ վճարների, վավեր է ճանաչում ՀԵՄԱ-ի անձնակազմի վարորդական վկայականները կամ օդաչուի վկայականները:

7. ՀԵՄԱ-ն և ՀԵՄԱ-ի անձնակազմն իրենց տրանսպորտային միջոցներով, սարքավորումներով և պարագաներով Ընդունող պետության ամբողջ տարածքում օգտվում են ազատ և անսահմանափակ տեղաշարժից, այդ թվում՝ նրա օդային տարածքում:

Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պայմանավորվածություններ կարող են ձեռք բերվել 18-րդ հոդվածի համաձայն:

8. Պաշտոնական պարտականությունների իրականացման ընթացքում ճանապարհորդելիս ՀԵՄԱ-ի անձնակազմը իրավասու է օգտվել հանրային ճանապարհներից, կամուրջներից և օդանավակայաններից՝ առանց տուրքերի, վճարների, ճանապարհավճարների, հարկերի կամ այլ վճարումների: ՀԵՄԱ-ն չի ազատվում այն ծառայությունների դիմաց արվող ողջամիտ վճարումներից, որոնք պահանջվել և ստացվել են այն նույն պայմաններով, որոնք կիրառվում են Ընդունող պետության քաղաքացիների նկատմամբ:

Հոդված 5

Ընդունող պետության կողմից ՀԵՄԱ-ին տրվող արտոնություններն ու անձեռնմխելիությունները

1. ՀԵՄԱ-ի օբյեկտներն անձեռնմխելի են: Ընդունող պետության գործակալները չեն կարող մուտք գործել այնտեղ՝ առանց Առաքելության ղեկավարի համաձայնության:

2. ՀԵՄԱ-ի օբյեկտները, դրանց կահավորանքը և դրանցում գտնվող գույքը, ինչպես նաև նրանց տրանսպորտային միջոցները անձեռնմխելի են և չեն կարող ենթարկվել խուզարկության, առգրավման, դրվել կալանքի տակ կամ լինել կատարողական վարույթի օբյեկտ:

3. ՀԵՄԱ-ն, նրա սեփականությունը և գույքը, որտեղ էլ գտնվեն և ում կողմից էլ տնօրինվեն, ցանկացած իրավական գործընթացում օգտվում են անձեռնմխելիության իրավունքից:

4. ՀԵՄԱ-ի արխիվները և փաստաթղթերն օգտվում են մշտական անձեռնմխելիությունից, որտեղ էլ դրանք լինեն:

5. ՀԵՄԱ-ի պաշտոնական նամակագրությունն անձեռնմխելի է:

6. ՀԵՄԱ-ն իր նպատակների իրագործման համար ձեռք բերվող և ներմուծվող ապրանքների, մատուցվող ծառայությունների և օգտագործվող օբյեկտների մասով, Ընդունող պետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան, ազատվում է բոլոր պետական, տեղական և համայնքային տուրքերից, հարկերից և վճարներից: ՀԵՄԱ-ն չի ազատվում տուրքերից, հարկերից կամ վճարներից իրեն մատուցված ծառայությունների համար:

7. Ընդունող պետությունը, իր օրենքներին և կարգավորումներին համապատասխան, թույլատրում է ՀԵՄԱ-ի նպատակների իրագործման համար անհրաժեշտ ապրանքների մուտքը և այդ ապրանքներն ազատում է բոլոր մաքսատուրքերից, վճարներից, ճանապարհավճարներից, հարկերից և համանման

վճարներից՝ բացառությամբ պահեստավորման, փոխադրման և պահանջվող ու մատուցվող այլ ծառայությունների մասով վճարների:

Հոդված 6

Ընդունող պետության կողմից ՀԵՄԱ-ի անձնակազմին տրվող արտոնություններն ու անձեռնմխելիությունները

1. ՀԵՄԱ-ի անձնակազմը չի կարող որևէ կերպ ձերբակալվել կամ կալանավորվել:

2. ՀԵՄԱ-ի անձնակազմի փաստաթղթերը, նամակագրությունը և գույքն անձեռնմխելի են՝ բացառությամբ կատարողական վարույթի դեպքում իրականացվող գործողությունների, երբ դրանք թույլատրվում են 6-րդ մասի համաձայն:

3. ՀԵՄԱ-ի անձնակազմը բոլոր հանգամանքներում Ընդունող պետությունում ունի քրեական հետապնդումից անձեռնմխելիություն: ՀԵՄԱ-ի անձնակազմին տրված արտոնությունները Ընդունող պետությունում քրեական հետապնդումից անձեռնմխելիությունը նրան չեն ազատում Ուղարկող պետությունում իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու իրավագործությունից: Ուղարկող պետությունը կամ ԵՄ համապատասխան կառույցը կարող է հրաժարվել Ընդունող պետությունում քրեական հետապնդումից ՀԵՄԱ-ի անձնակազմի անձեռնմխելիությունից՝ ըստ հանգամանքների: Այդպիսի հրաժարումը բոլոր դեպքերում պետք է լինի բացահայտորեն արտահայտված հրաժարում:

4. ՀԵՄԱ-ի անձնակազմն Ընդունող պետությունում օգտվում է քաղաքացիական և վարչական անձեռնմխելիությունից՝ նրա կողմից իր պաշտոնական գործառույթներն իրականացնելիս արված հայտարարության կամ գրավոր խոսքի և կատարված բոլոր գործողությունների առնչությամբ: Եթե Ընդունող պետության որևէ դատարանում քաղաքացիական վարույթ է հարուցվում

ՀԵՄԱ-ի անձնակազմի որևէ անդամի նկատմամբ, այդ մասին անհապաղ տեղեկացվում են Առաքելության ղեկավարը և Ուղարկող պետության կամ ԵՄ կառույցի իրավասու մարմինը: Նախքան դատարանում վարույթ հարուցելը Առաքելության ղեկավարը և Ուղարկող պետության կամ ԵՄ կառույցի իրավասու մարմինը դատարանին հավաստիացում են ներկայացնում առ այն՝ տվյալ գործողությունը ՀԵՄԱ-ի անձնակազմի անդամի կողմից կատարվել է իր պաշտոնական գործառույթներն իրականացնելիս, թե ոչ: Եթե արարքը կատարվել է ծառայողական գործառույթների իրականացման շրջանակներում, վարույթ չի հարուցվում, և կիրառվում են 16-րդ հոդվածի դրույթները: Եթե արարքը չի կատարվել պաշտոնական գործառույթների իրականացման շրջանակներում, վարույթը կարող է շարունակվել: Առաքելության ղեկավարի և Ուղարկող պետության կամ ԵՄ կառույցի իրավասու մարմնի հավաստիացումը պարտադիր է Ընդունող պետության կողմից իրավագործություն իրականացվելիս, և վերջինս չի կարող այն վիճարկել: Հիմնական պահանջին անմիջականորեն առնչվող որևէ հակընդդեմ հայցի հետ կապված ՀԵՄԱ-ի անձնակազմի կողմից վարույթ հարուցելը ազատում է նրան անձեռնմխելիություն վկայակոչելու իրավունքից:

5. ՀԵՄԱ-ի անձնակազմը պարտավոր չէ հանդես գալ որպես վկա:

6. ՀԵՄԱ-ի անձնակազմի հետ կապված չի կարող հարուցվել կատարողական վարույթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա դեմ քաղաքացիական վարույթ է հարուցվում, որը չի առնչվում նրա պաշտոնական գործառույթներին: ՀԵՄԱ-ի անձնակազմի գույքը, որն Առաքելության ղեկավարի կողմից հաստատվում է որպես պաշտոնական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույք, ենթակա չէ բռնագրավման՝ ի կատարումն դատական վճռի, որոշման կամ կարգադրության: Քաղաքացիական վարույթի շրջանակներում ՀԵՄԱ-ի անձնակազմը չի կարող ենթարկվել անձնական ազատության որևէ սահմանափակման կամ իրավունքների այլ սահմանափակման:

7. Ընդունող պետությունում ՀԵՄԱ-ի անձնակազմի անձեռնմխելիությունը նրան չի ազատում համապատասխան Ուղարկող պետությունների

իրավագործությունից:

8. ՀԵՄԱ-ի անձնակազմն ազատվում է ՀԵՄԱ-ի համար մատուցվող ծառայությունների նկատմամբ կիրառելի սոցիալական ապահովության վերաբերյալ կարգավորումներից, որոնք կարող են գործել Ընդունող պետությունում:

9. Ընդունող պետությունում ՀԵՄԱ-ի անձնակազմն ազատվում է ՀԵՄԱ-ի կամ Ուղարկող պետությունների կողմից իրեն վճարվող աշխատավարձի և վարձատրությունների, ինչպես նաև Ընդունող պետության սահմաններից դուրս ստացված այլ եկամտի հարկումից:

10. Ընդունող պետությունը, համաձայն իր օրենքների և կանոնակարգերի, թույլատրում է ՀԵՄԱ-ի անձնակազմի անձնական օգտագործման ապրանքների մուտքը և ազատում է այդ ապրանքները բոլոր մաքսատուրքերից, հարկերից և համանման վճարներից՝ բացառությամբ պահպանման, տեղափոխման և նմանատիպ ծառայությունների դիմաց կատարվող վճարումների: Ընդունող պետությունը նաև թույլատրում է այդպիսի ապրանքների արտահանումը: ՀԵՄԱ-ի անձնակազմի կողմից ներքին շուկայում ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն ազատվում է ԱԱՀ-ից և հարկերից՝ Ընդունող պետության օրենքներին համապատասխան:

11. ՀԵՄԱ-ի անձնակազմի անձնական ուղեբեռը չի ենթարկվում ստուգման, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ այն պարունակում է այնպիսի իրեր, որոնք նախատեսված չեն ՀԵՄԱ-ի անձնակազմի անձնական օգտագործման համար, կամ՝ ապրանքներ, որոնց ներմուծումը կամ արտահանումն արգելված է Ընդունող պետության օրենքով կամ ենթակա է կարանտինային կանոններին: Այդպիսի անձնական ուղեբեռի ստուգումը պետք է կատարվի միայն ՀԵՄԱ-ի անձնակազմի տվյալ անդամի կամ ՀԵՄԱ-ի լիազորված ներկայացուցչի ներկայությամբ:

Հոդված 7

Տեղում աշխատանքի ընդունված անձնակազմը

Տեղում աշխատանքի ընդունված անձնակազմն օգտվում է արտոնություններից և անձեռնմխելիությունից միայն Ընդունող պետության կողմից թույլատրելի սահմաններում: Այնուամենայնիվ, Ընդունող պետությունն իր իրավազորությունն այդ անձնակազմի նկատմամբ այնպես է իրականացնում, որ անհիմն կերպով չմիջամտի ՀԵՄԱ-ի գործառույթների իրականացմանը:

Հոդված 8

Քրեական իրավազորությունը

Ուղարկող պետության իրավասու մարմիններն իրավունք ունեն Ընդունող պետության տարածքում ամբողջ ծավալով իրականացնելու Ուղարկող պետության օրենսդրությամբ ՀԵՄԱ-ի անձնակազմի առնչությամբ իրենց վերապահված քրեական իրավազորությունը և կարգապահական լիազորությունները:

Հոդված 9

Անվտանգությունը

1. Ընդունող պետությունը ստանձնում է ՀԵՄԱ-ի անձնակազմի անվտանգությունը սեփական միջոցներով ապահովելու ամբողջ պատասխանատվությունը:

2. Առաջին մասի նպատակներով Ընդունող պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները ՀԵՄԱ-ի և ՀԵՄԱ-ի անձնակազմի պաշտպանության, ապահովության և անվտանգության համար: Ընդունող պետության կողմից առաջարկվող որևէ հատուկ միջոց համաձայնեցվում է

Առաքելության ղեկավարի հետ նախքան դրա իրականացումը: Ընդունող պետությունը թույլ է տալիս և անվճար աջակցում է ՀԵՄԱ-ի անձնակազմի բժշկական տարահանմանն առնչվող գործողություններին:

Անհրաժեշտության դեպքում ձեռք են բերվում 18-րդ հոդվածում նշված լրացուցիչ պայմանավորվածությունները:

Հոդված 10

Համազգեստը

1. ՀԵՄԱ-ի անձնակազմը կարող է կրել ազգային համազգեստ կամ քաղաքացիական հագուստ՝ ՀԵՄԱ-ի տարբերանշանով:

2. Համազգեստ կրելը կարգավորվում է Առաքելության ղեկավարի կողմից հաստատված կանոններով:

Հոդված 11

Համագործակցությունը և տեղեկությունների հասանելիությունը

1. Ընդունող պետությունը լիարժեք համագործակցություն և աջակցություն է ցուցաբերում ՀԵՄԱ-ին և ՀԵՄԱ-ի անձնակազմին:

2. Ընդունող պետությունն ապահովում է ՀԵՄԱ-ի անձնակազմին արդյունավետ հասանելիությունը, եթե պահանջվում է կամ անհրաժեշտ է ՀԵՄԱ-ի գործողությունների իրականացման համար՝

a) Ընդունող պետության վերահսկողության տակ գտնվող օբյեկտներին, տարածքներին և ծառայողական մեքենաներին, որոնք առնչվում են ՀԵՄԱ-ի մանդատի իրականացմանը,

b) Ընդունող պետության վերահսկողության ներքո գտնվող փաստաթղթերին, նյութերին և տեղեկություններին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ՀԵՄԱ-ի մանդատի իրականացման համար:

Առաջին ենթակետի նպատակներով անհրաժեշտության դեպքում ձեռք են բերվում 18-րդ հոդվածում նշված լրացուցիչ պայմանավորվածությունները:

3. Առաքելության ղեկավարը և Ընդունող պետությունը պարբերաբար խորհրդակցություն են անցկացնում և ձեռնարկում են համապատասխան միջոցներ բոլոր համապատասխան մակարդակներում սերտ և փոխադարձ կապ ապահովելու համար: Ընդունող պետությունը կարող է ՀԵՄԱ-ում նշանակել կապի գծով պատասխանատու անձի:

Հոդված 12

Ընդունող պետության աջակցությունը և պայմանագրերի կնքումը

1. Ընդունող պետությունը պահանջ ներկայացվելու դեպքում ՀԵՄԱ-ին աջակցում է համապատասխան օբյեկտները գտնելու հարցում:

2. Ընդունող պետությունը համապատասխան պահանջի և հնարավորության դեպքում անհատույց տրամադրում է իրեն պատկանող օբյեկտները: Ընդունող պետությունը չի կարող պահանջել որևէ փոխհատուցում այդ օբյեկտներում շինարարության, փոփոխությունների կամ ձևափոխումների առնչությամբ:

Մասնավոր կազմակերպություններին պատկանող օբյեկտները, եթե դրանք անհրաժեշտ են ՀԵՄԱ-ի վարչական և գործառնական գործունեության համար, տրամադրվում են համապատասխան պայմանագրային պայմանավորվածությունների հիման վրա:

3. Ընդունող պետությունն իր միջոցների և հնարավորությունների շրջանակներում աջակցում է ՀԵՄԱ-ի նախապատրաստման, հիմնման և իրականացման աշխատանքներին և աջակցում է ՀԵՄԱ-ին, այդ թվում՝ ՀԵՄԱ-ի փորձագետների համար համատեղակայման հարմարություններ և սարքավորումներ ապահովելու հարցերում:

4. Ընդունող պետության օգնությունն ու աջակցությունը ՀԵՄԱ-ին տրամադրվում են առնվազն նույն պայմաններով, ինչ պայմաններով դրանք տրամադրվում են իր քաղաքացիներին:

5. Համաձայն Ընդունող պետության օրենքներին և կարգավորումներին՝ ՀԵՄԱ-ն ունի անհրաժեշտ իրավունակություն իր առաքելությունն իրականացնելու համար, մասնավորապես, բանկային հաշիվներ բացելու և գույք ձեռք բերելու կամ այն տնօրինելու, ինչպես նաև իրավական վարույթում կողմ լինելու մասով:

6. Ընդունող պետությունում ՀԵՄԱ-ի կողմից կնքված պայմանագրերի նկատմամբ կիրառելի իրավունքը որոշվում է այդ պայմանագրերի համապատասխան դրույթներով:

7. ՀԵՄԱ-ի կողմից կնքված պայմանագրերում կարող է սահմանվել, որ 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված վեճերի կարգավորման ընթացակարգը կիրառելի է պայմանագրի իրականացումից ծագող վեճերի նկատմամբ:

8. Ընդունող պետությունը նպաստում է ՀԵՄԱ-ի կողմից առևտրային կազմակերպությունների հետ առաքելության նպատակներով կնքված պայմանագրերի իրականացմանը:

Հոդված 13

ՀԵՄԱ-ի անձնակազմի մահացած անդամները

1. Առաքելության ղեկավարն իրավունք ունի պատասխանատվություն ստանձնելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու ՀԵՄԱ-ի անձնակազմի մահացած անդամի մարմինը, ինչպես նաև նրա անձնական գույքը հայրենիք վերադարձնելու համար:

2. ՀԵՄԱ-ի անձնակազմի որևէ մահացած անդամի դիակերձումը չի կատարվում առանց համապատասխան Պետության համաձայնության և առանց ՀԵՄԱ-ի ներկայացուցչի և (կամ) համապատասխան Պետության ներկայացուցչի

ներկայության:

3. Ընդունող պետությունը և ՀԵՄԱ-ն հնարավորինս սերտորեն համագործակցում են ՀԵՄԱ-ի անձնակազմի մահացած անդամի մարմինը հայրենիք արագ վերադարձնելու նպատակով:

Հոդված 14

Հաղորդակցությունը

1. ՀԵՄԱ-ն կարող է տեղադրել և շահագործել հաղորդող և ընդունող ռադիոկայաններ, ինչպես նաև արբանյակային համակարգեր: Նա համագործակցում է Ընդունող պետության իրավասու մարմինների հետ՝ համապատասխան հաճախականությունների օգտագործման հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով: Ընդունող պետությունը հնարավորություն է տալիս անվճար օգտվելու հաճախականությունների տիրույթից:

2. ՀԵՄԱ-ն օգտվում է ռադիոյով (այդ թվում՝ արբանյակային, շարժական և ձեռքի ռադիոյով), հեռախոսով, համացանցով, հեռագրով, ֆաքսիմիլով և այլ միջոցներով անսահմանափակ հաղորդակցության իրավունքից, ինչպես նաև ՀԵՄԱ-ի ներսում և դրա օբյեկտների միջև այդպիսի հաղորդակցությունն ապահովելու համար անհրաժեշտ սարքավորումներ տեղադրելու իրավունքից, այդ թվում՝ ՀԵՄԱ-ի նպատակների իրականացման համար մալուխներ և վերգետնյա գծեր անցկացնելու իրավունքից:

3. ՀԵՄԱ-ն իր օբյեկտներում կարող է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ՀԵՄԱ-ին և (կամ) ՀԵՄԱ-ի անձնակազմին հասցեագրված և նրանցից ստացվող փոստի փոխանցման համար:

Հոդված 15

Մահվան, վնասվածքի, վնասի և կորստի դեպքում պահանջները

1. ՀԵՄԱ-ն, ՀԵՄԱ-ի անձնակազմը, ԵՄ-ն և Ուղարկող պետությունները պատասխանատվություն չեն կրում քաղաքացիական կամ պետական գույքին հասցված որևէ վնասի կամ կորստի համար, որն առնչվում է գործառնական կարիքներին կամ պատճառվել է քաղաքացիական անկարգությունների կամ ՀԵՄԱ-ի պաշտպանությանն ուղղված գործողությունների հետևանքով:

2. Առաջին մասով չսահմանված քաղաքացիական կամ պետական գույքը վնասելու կամ կորստի հետ կապված պահանջները, ինչպես նաև անձանց մահվան կամ նրանց առողջությանը պատճառված վնասի հետ կապված պահանջները և ՀԵՄԱ-ի գույքին հասցված վնասի կամ կորստի հետ կապված պահանջները բարեկամաբար կարգավորելու նպատակով Ընդունող պետության իրավասու մարմինների միջոցով ներկայացվում են ՀԵՄԱ-ին՝ Ընդունող պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից ներկայացված պահանջների մասով, և Ընդունող պետության իրավասու մարմիններին՝ ՀԵՄԱ-ի կողմից ներկայացված պահանջների մասով:

3. Այն դեպքում, երբ հնարավոր չէ հասնել բարեկամական կարգավորման, պահանջը ներկայացվում է պահանջների քննության հանձնաժողով, որը կազմված է ՀԵՄԱ-ի և Ընդունող պետության հավասար թվով ներկայացուցիչներից: Պահանջների բավարարվում են համատեղ համաձայնության արդյունքում:

4. Այն դեպքում, երբ պահանջների քննության հանձնաժողովի շրջանակներում համաձայնություն ձեռք չի բերվում, մինչև 40 000 եվրոյին (ներառյալ) համարժեք պահանջ ներառող վեճը լուծվում է դիվանագիտական ճանապարհով՝ Ընդունող պետության և ԵՄ ներկայացուցիչների միջև: Այդ գումարը գերազանցող պահանջների դեպքում վեճը ներկայացվում է արբիտրաժային դատարան, որի որոշումները պարտադիր ուժ ունեն:

5. 4-րդ մասում նշված արբիտրաժային դատարանը կազմվում է երեք

արբիտրներից, որոնցից մեկը նշանակվում է Ընդունող պետության կողմից, մյուսը նշանակվում է ՀԵՄԱ-ի կողմից, իսկ երրորդը՝ Ընդունող պետության և ՀԵՄԱ-ի կողմից՝ համատեղ: Եթե կողմերից մեկը երկու ամսվա ընթացքում չի նշանակում արբիտր, կամ եթե Ընդունող պետության և ՀԵՄԱ-ի միջև համաձայնություն ձեռք չի բերվում երրորդ արբիտրի նշանակման հարցում, տվյալ արբիտրը նշանակվում է Եվրոպական Միության արդարադատության դատարանի նախագահի կողմից:

6. ՀԵՄԱ-ի և Ընդունող պետության վարչական մարմինների միջև վարչական պայմանավորվածություն է ձեռք բերվում պահանջների քննության հանձնաժողովի և արբիտրաժային դատարանի իրավասության շրջանակի, այդ մարմիններում կիրառելի ընթացակարգի և պահանջները ներկայացնելու պայմանների վերաբերյալ:

Հոդված 16

Կապը և վեճերը

1. Սույն Համաձայնագրի կիրառման առնչությամբ ծագած բոլոր հարցերը համատեղ ուսումնասիրվում են ՀԵՄԱ-ի և Ընդունող պետության իրավասու մարմինների ներկայացուցիչների կողմից:

2. Նախնական համաձայնություն ձեռք չբերելու դեպքում սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերն Ընդունող պետության և ԵՄ ներկայացուցիչների միջև լուծվում են բացառապես դիվանագիտական ճանապարհով:

Հոդված 17

Այլ դրույթներ

1. Ընդունող պետության կառավարությունը պատասխանատվություն է կրում Ընդունող պետության համապատասխան տեղական մարմինների կողմից

ՀԵՄԱ-ի և ՀԵՄԱ-ի անձնակազմի՝ սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունների, անձեռնմխելիության և իրավունքների իրականացման և պահպանման համար:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ սահմանված չէ կամ չի կարող մեկնաբանվել որպես այլ համաձայնագրերով նախատեսված՝ ԵՄ անդամ պետության կամ ՀԵՄԱ-ին մասնակցող որևէ այլ պետության իրավունքներից շեղում:

Հոդված 18

Կիրառման վերաբերյալ պայմանավորվածությունները

Սույն Համաձայնագրի կիրառման նպատակով գործառնական, վարչական և տեխնիկական հարցերը կարող են լինել առանձին պայմանավորվածությունների առարկա, որոնք պետք է ձեռք բերվեն Առաքելության ղեկավարի և Ընդունող պետության վարչական մարմինների միջև:

Հոդված 19

Ուժի մեջ մտնելը և գործողությունը դադարելը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվելու է 2023 թ. փետրվարի 20-ից:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը միմյանց տեղեկացնում են ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերն ավարտելու մասին: Ծանուցումներն ուղղվելու են՝ մի կողմից՝ Եվրոպական միության Խորհրդի գլխավոր քարտուղարին, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մինչև ՀԵՄԱ-ի վերջին անձնակազմի մեկնելու օրը, որի մասին կձանուցի ՀԵՄԱ-ն:

4. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել, կամ դրա գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելը չի ազդի նախքան գործողությունը դադարեցնելը սույն Համաձայնագրի իրականացումից բխող իրավունքների կամ պարտավորությունների վրա:

Կատարված է Երևանում երկու հազար քսաներեք թվականի նոյեմբերի քսանին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը անգլերեն:

Հայաստանի Հանրապետության

կողմից՝

Եվրոպական միության

կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023թ. նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**